ՀԵՔԻԱԹՆԵՐ



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ
(1869–1923)

Հովհաննես Թումանյանը ամենայն հայոց բանաստեղծն է: Ծնվել է Լոռվա Դսեղ գյուղում: 1879 թ. սովորել է տեղի ծխական դպրոցում: 1879–1883 թթ. սովորել է Ստեփանավանի նորաբաց երկսեռ դպրոցում: 1883–1887թթ. սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1899թթ. նրա նախաձեռնությամբ Թիֆլիսում ստեղծվել է «Վերնատուն» գրական խմբակը, որի անդամներն էին Հովհաննես Թումանյանը, Լևոն Շանթը, Ղազարոս Աղայանը, Ավետիք Իսահակյանը և ուրիշներ: Զբաղվել է նաև հասարակական ակտիվ գործունեությամբ: Եղել է Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահը: Ղեկավարել է նաև Հայաստանի օգնության կոմիտեն:

Գրել է բանաստեղծություններ, պոեմներ, բալլադներ, պատմվածքներ, հեքիաթներ, քառյակներ: Կատարել է թարգմանություններ, մշակել «Սասնա ծռեր» դյուցազնավեպի «Սասունցի Դավիթ» ճյուղը: Հ. Թումանյանի ստեղծագործությունների հիման վրա ստեղծվել են «Անուշ» և «Ալմաստ» օպերաները:

Հ. Թումանյանի տուն-թանգարաններ կան Երևանում, Դսեղում, Թբիլիսիում: